«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ _____ Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ III Բ ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դավթյան Սոնա Արտավազդի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 – 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

IV բ դասարանը բաղկացած է 28 աշակերտից՝ 15 աղջիկ, 13 տղա։ Դասարանում ստեղծված է միասնական, համերաշխ ու ջերմ կոլեկտիվ։ Ամենօրյա աշխատանք է տարվում դպրոցի կարգ ու կանոնին հետևելու ուղղությամբ։ Աշակերտներից շատերն աչքի են ընկնում իրենց տրամաբանությամբ, մտածողությամբ, ստեղծագործական կարողություններով։

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

Ստեղծել գիտակցական վերաբերմունք ուսման նկատմամաբ։ Սերմանել դրական վերաբերմունք դպրոցի, ուսուցչի, ընկերոջ, շրջապատող աշխարհի նկատմամբ։ Մշտական կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքներին։ Աշակերտների մեջ բարոյական բարձր որակներ՝ ազնվություն, հայրենասիրություն, ընկերասիրություն, բարություն, հարգանք մեծի և ընկերոջ նկատմամբ։ Մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսումնադաստիարակչական աշխատանքներից հեր մնացող աշակերտներին։

1 .Հայեցի դաստիարակություն.

Ձևավորել ազգային ավանդույթները արժևորելու, գնահատելու, կիրառելու և հաջորդ սերունդներին փոխանցելու կարողություններ

2. Հոգևոր դաստիարակություն.

Դաստիարակել հոգևոր արժեքները գնահատելու և դրանց հետևելու կուլտուրան։ Հետևել մեր նախնիների ստեղծած ավանդներին։ Գնահատել կրոնի դերը, ուժը, վիթխարի նշանակությունը հայ ժողովրդի պահպանման գործում։

3.Գեղագիտական դաստիարակություն.

Արթնացնել սեր արվեստի, գրականության նկատմամբ։ Դաստիարակել գեղագիտական բարձր ճաշակ։ Հասնել այն բանին, որ աշակերտները կարողանան տեսնել և գնահատել գեղեցիկը։

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Սա նպատակաուղղված գործընթաց է , որի նպատակն է մատաղ սերնդի հայրենասիրության, հայրենիքի նկատմամբ պարտքի զգացում դաստիարակելը։

5.Ֆիզիկական դաստիարակություն.

Ձևավորել ֆիզիկզպես կոփված, առողջ անհատներ։ Դաստիարակել սեր ֆիզկուլտուրայի, սպորտի նկատմամբ։ Կարևորել սպորտի դերը երեխայի առողջ զարգացման գործում։ Դաստիարակել սեր մեծերի կատարած աշխատանքի նկատմամբ։ Դասարանում սահմանել ամենօրյա հերթապահություն և հետևել դասասենյակի մաքրությանը, ծաղիկների խնամքին։

6.Աշխատանքային դաստիարակություն.

Վաղ տարիքից ձևավորել պատասխանատվություն աշխատանքի նկատմամբ, կարևորել ու գիտակցել դրա դերն ու նշանակությունը մարդու կյանքում

7.Բնապահպանական դաստիարակություն.

Արթնավնել սեր և հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ։ Սովորեցնել ճանաչել բնությունը, գնահատել նրա դերը, հիանալ գեղեցկությամբ։ Խնամել, պահել ու պահպանել մեզ շրջապատող բուսականությունը։

8.Դպրոց-ընտանիք կապը.

Այս կապը պետք է ամուր լինի, որպեսզի կրթվի և դաստիարակվի հասարակությանը պիտանի սերունդ։ Համավարակով պայմանավորված այն ավելի ամուր դարձնել, որ պահպանվի բոլոր կանոնները և կարողանանք խուսափել տարածումից և անցանկալի հետևանքներից։

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
I	<< Գիտելիքի օր >>	Սեպտեմբեր
II	<< Օրվա ռեժիմ >>	Սեպտեմբեր
III	<<Անկախության օր>>	Սեպտեմբեր
IV	<<Անվտանգ երթևեկություն>>	Սեպտեմբեր
V	<<Իմ լուսե ուսուցիչ>>	Հոկտեմբեր
VI	<<Ինչպես պաշտպանվել վարակներից>>	Հոկտեմբեր
VII	<<Ինչ է բնական աղետը>>	Հոկտեմբեր
VIII	<< Որոշումների ծառը >>	Հոկտեմբեր
IX	<<Առաջին բուժօգնություն>>	Նոյեմբեր
X	<<Ինչ է իրավունքը>>	Նոյեմբեր
XI	<<Օգտակար և վնասակար սովորություններ>>	Նոյեմբեր
XII	<<Ինչ կուզեի ունենալ>>	Նոյեմբեր
XIII	<<Սպիտակի երկրաշարժ>>	Դեկտեմբեր
XIV	<<Ես արդեն մեծ եմ>>	Դեկտեմբեր
XV	<< Զրույց հոգեբանի հետ >>	Դեկտեմբեր
XVI	<<Ինչպես անցկացրի Ամանորը >>	Հունվար
XVII	<<Հույզերը և խոսքը>>	Հունվար
XVIII	<<Իմ հզոր բանակ>>	Հունվար
XIX	<<Ինչպես վարվենք>>	Հունվար
XX	<<Արշավախումբը>>	Փետրվար
XXI	<<Տյառնընդառաջ>>	Փետրվար
XXII	<<Գրքի դերը մարդու կյանքում>>	Փետրվար
XXIII	<<Ընդհարում>>	Փետրվար
XXIV	<<Կանանց միջազգային տոն>>	Մարտ

XXV	<<Ի՞նչ է քաղաքաշտպանությունը>>	Մարտ
XXVI	<<Հանդուրժողականություն>>	Մարտ
XXVII	<<Ծիծաղի և հումորի օր>>	Ապրիլ
XXVIII	<<Ավետման և մայրության տոն>>	Ապրիլ
XXIX	<<Իմ ընկերը>>	Ապրիլ
XXX	<<Հայոց Մեծ Եղեռն>>	Ապրիլ
XXXI	<<Պահպանենք բնությունը>>	Ապրիլ
XXXII	<<Հաղթանակի օր>>	Մայիս
XXXIII	<<Ընտանիքի դերը երեխայի կյանքում>>	Մայիս
XXXIV	<<Ամառային արձակուրդներին ընդառաջ>>	Մայիս

Դասղեկ՝ /Ս. Դավթյան/